ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ

Հայ ժողովրդական բանահյուսությունը Գր. Նարեկացուց մինչև Հ. Թումանյան, Հ. Շիրազ ու Պ. Սևակ և մինչև մեր օրերը եղել է սնուցող կենսատու աղբյուր հայ բանաստեղծների համար: Այդ իմաստով ինքնատիպ օրինակ է Հ. Սահյանի քնարերգությունը:

Համո Սահյանն իր ստեղծագործություններում համագրել, համեմատել ու միաձուլել է հայ քնարերգության ու ժողովրդական բանահյուսության լավագույն ավանդույթները: Նրա քնարերգությունը համակված է հայ ժողովրդի աշխարհընկալման, կենսափիլիսոփայության, բարոյական ու գեղագիտական ըմբռնումների, կյանքի ու կենցաղի խոր և բազմակողմանի իմացությամբ, ժողովրդական բառուբանի հանգեպ պաշտամունքի հասնող սիրով: «Ամեն ժողովուրդ, որ չի ոչնչացել իր զարգացման նախնական աստիճանի վրա, չի կարող իր գոյության հետագա բոլոր դարերում չօգտվել իր բանահյուսական նյութից ու մտածողությունից, որովհետև այդ նյութն ու մտածողությունը շարունակում են ապրել ոչ միայն և ոչ այնքան ինքնաբավորեն, որքան իբրև լեզու, իբրև ազգային մտածողություն և ժողովրդական հոգեբանություն»[1],– գրել է Պ. Սևակը: Այս միտքը լիովին ճշմարիտ է Սահյանի բանաստեղծական աշխարհի նկատմամբ:

Մեր ազգային հերոսավեպը Սահյան բանաստեղծի տեսադաշտում է եղել ստեղծագործական կյանքի հենց սկզբից: «Սասնա տունը» նրա քնարերգության մեջ խորհրդանշում է հայրենիքի, հայրենի տան ու օջախի հաստատունության, ամրության գաղափարները: Այս իմաստով ընդգծվում է բանաստեղծի ցավը հայ ժողովրդի ողբերգության՝ Մեծ Եղեռնի կապակցությամբ. «Սասնա տան անտուն սարեր» տողով նա բնորոշում է կորուսյալ հայրենիքի իրողությունը, ժողովրդի տեղահանությունը, բռնագաղթն ու վերածնունդը.

Ախր ուրիշ աեղ տեղահան եղած,
Եկած ուսերով Արագած սարի
Ուսերին հենված Սասնա տուն չկա[2]: (II, 22)

Բանաստեղծը որոնում, զուգահեռներ է գտնում իրեն շրջապատող աշխարհի՝ իրական Սասնա տան ու վիպական «Սասնա ծռերի» միջև: Իրա-

---

[1] Պ. Սևակ. Երկերի ժողովածու. հ. 6, Երևան, 1974, էջ 403–404:

[2] Հ. Սահյան. Բանաստեղծություններ. հ. II. Երևան, 1984, էջ 22 (այսուհետ հատորը և էջը կնշվեն տեքստում՝ մեջբերումներին կից):

կան հայրենիքի աղբյուրից բխող ջուրը զորություն, քաջություն է պարգևում խմողին, ինչպես հերոսավեպում.

Նրանից ով մի կում խմեց,
Նա Սասնա մի ծուռ է, ասա: (II, 215)

Սահյանի զգայուն ու նուրբ լսողությունը լսում է ոչ միայն Ջենով Օհանի հուժկու ձայնը, այլև որսում քառասուն ջրաղացաքարի տակ թաքնված Մսրա Մելիքի խոկումները (II, 266): Եվ այս եղանակով բանաստեղծը բազմիցս անդրադառնում է վեպի առանձին հերոսներին, զենք ու զրահին, մոտիվներին: Նրա՝ իբրև անհատի, հայ մարդու բանաստեղծական երազանքը մարմնացում է ստացել դարձյալ վեպի միջոցով.

Ինձ Քուռկիկ-Ջալալին էր պետք,
Եվ մի Խանդութ խաթուն:
Զոր հացի մի բաժին էր պետք
Եվ մի Խանդութ խաթուն:
Ոչ գափնի, ոչ դիրք, ոչ դրախտ,
Ոչ ավետյաց երկիր,
Սասնա տան բանալին էր պետք
Եվ մի Խանդութ խաթուն: (II, 334)

Հայ ժողովրդական երգը Սահյանի քնարերգության մեջ հանդես է գալիս բազմաղան դրսևորումներով: Ժողովրդական երգերի կառուցվածքային առանձնահատկությունների չափերի ու հանգավորման եղանակների, գեղարվեստաարտահայտչական միջոցների համակարգի, երգերի ամբողջական ու առանձին հատվածների և տողերի, վերնագրերի օգտագործմամբ նա գրել է բազմաթիվ գողտրիկ բանաստեղծություններ, որոնք հայ արգի քնարերգության զարգն են: Սահյանը երբեմն ուղղակի ձայնակցում է երգերի ոգուն, տրամադրությանը, երբեմն հակադրվում, ընդարձակում, ծավալուն դարձնում, երբեմն էլ համառոտում բուն ժողովրդականը՝ դրանք համահունչ դարձնելով ստեղծագործական իր նպատակադրմանը:

«Լորեր» բանաստեղծությունն ակնհայտորեն առնչվում է ժողովրդական «Քելե-քելե» երգին: Օգտագործվում են երգի առանձին արտահայտությունները, մակդիրները, որոնք, անհատականին միահյուսվելով, ստեղծում են իմաստային հակադրություն երգի ու բանաստեղծության միջև: Ժողովրդական երգում լորիկը սիրավոր է ու վիրավոր: Սահյանի հայրենի Լոր գյուղում՝ ընդհակառակը.

Բոլոր լորերը սիրավոր էին,
Վիրավոր լորեր չկային Լորում: (II, 232)

Բանաստաղծությունը ծավալվելով նույն բառերով ու նույն հանգավորմամբ՝ ստեղծում է երջանիկ պատանեկության ու ջահելության անմոռաց տեսլականը.

Բոլոր օրերը սիրավոր էին,
Վիրավոր օրեր չկային Լորում: (II, 232)

Ստեղծագործական նույն սկզբունքով է Սահյանը մոտեցել ու օգտագործել հանրահայտ «Կռունկի» գեղարվեստաարտահայտչական համակարգը: Սահյանի կռունկը նույնպես ոգեղեն հավք է՝ թռած կարոտի, սիրո անհասանելի երազների կիրճից:

Միջնադարյան ժողովրդական երգերի՝ հայրենների հետևությամբ՝ բանաստեղծական չափով ու հանգավորմամբ, Սահյանը գրել է ութ ութնյակից բաղկացած մի փունջ: Այդ ութնյակներում բանաստեղծը փորձում է մեկնել բնության, մարդու էության անքննելի առեղծվածները, բացահայտել մարդկային էության, ճակատագրի, կյանքի անցողիկության ու բարի գործի մնայունության իր ընկալումները, չափանիշները.

Մի հայրեն ասեմ ես էլ,
Իմ ապրած օրերին ասեմ:
Օրհնանքս՝ անցավորաց,
Մաղթանքս նորերին ասեմ:
Շահածս տամ հովերին,
Կորածս ծովերին ասեմ:
Թադավորն ապրած կենա,
Աստվածս՝ ցորենին ասեմ: (II, 373)

Ժողովրդական երգի կառուցվածքային ու հանգավորման առանձնահատկությունների հմուտ օգտագործման գողտրիկ նմուշներ են «Վեպ», «Խոսքերիդ համը» բանաստեղծությունները.

Մեր տունը բարձրիկ բլրի վրա էր:
Մեր տնից-ձեր տուն քար ու քռա էր:

Ձեր տնից-մեր տուն խութ ու խանդակ էր,
Ճամփա էլ թե կար, փակ էր ու փակ էր: (II, 382)

Ժողովրդական երգի ծանոթ պատկերները, մակդիրները, հասկացությունները, մնալով ժողովրդական երգարվեստի գեղարվեստական արտահայտչամիջոցների շրջանակներում, հնչում են նորովի և պարունակում են իմաստային նոր շերտեր.

Ձեր կուժն արծաթյա, մերը՝ կավից էր,
Ձեր բախտը՝ ոսկուց, մերը՝ ցավից էր: (II, 381)

Բանաստեղծի անսահման սերը հայ ժողովրդական երգի նկատմամբ, թվում է, ամփոփված է երգի ստորև բերվող հատվածում.

Քնածին ո՞ւր ես ասում,
Մի արթունի ասա...
Սահյանն է այս հողի տակ,
Վնաս չունի, ասա:
Եկել ես, անց ես կենում
Գերեզմանի մոտով,
Մի հայրեն ասա՝ լսի,
Մի անտունի ասա,
Որքան էլ սիրտը այրել
Ու խորովել, ասա,
Իր բախտից ոչ մի անգամ
Չի խռովել, ասա:
Անցնելիս ոտքդ կախիր,
Ուրիշ կտակ չուներ,
Մի «Կռունկ» ասա՝ լսի,
Մի հորովել ասա: (II, 140)

Մի բանաստեղծության մեջ, իմաստային մի ենթատեքստում ի մի են բերված հայկական ժողովրդական երգարվեստի տոհմիկ տեսակների ամենագուներ, բնորոշ նմուշները՝ հորովելն ու անտունին, հայրենն ու պանդխտության երգը ե ոչ միայն դրանք: Բանաստեղծությունն աչքի է ընկնում ժողովրդախոսակցական բանաձեված արտահայտությունների համահունչ կիրառմամբ՝ սիրտն այրել, բախտից խռովել, ոտքը կախել...

Սահյանի քնարերգությունը հողի, հողը չենացնող մարդու, արդար վաստակի, ցորենի ու արդար հացի գովք է ու իմաստային այս շրջանակներում միանգամայն բնականոն իրենց տեղն են գտել եղն ու հորթը, հորովելն ու մաղթանքը: Հորովելն ուղեկցել է բանաստեղծին նրա ստեղծագործական ողջ կյանքում: Տակավին 1944 թ. Սահյանը գրել է «Հորովել» վերնագրով մի բանաստեղծություն՝ նվիրված «հայրենաչունչ» ու «քաղցրալուր» հորովելին ու վերջինս պահող ե սերունդներին ավանդաբար փոխանցող մեր իմաստուն նախնիներին: Այնուհետև ըստ հարկի նա բազմիցս անդրադարձել է այդ երգին:

Հորովելն ու հայրենը իբրե խորհրդանիշներ բնորոշում են բանաստեղծի խոնարհ ու անաղմուկ հայրենապաշտությունը.

Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկա: (II, 22)

Հորովելատիպ բանաստեղծությունները Սահյանի քնարերգության մեջ յուրահատուկ տեղ ունեն: «Ուղեկիցներս» շարքում նրա՝ իբրե անհատի ու բանաստեղծի համբերությունն ու տոկունությունն անմիջական առնչություն են դրսեորում հորովելներում փաղաքշանք, հորդորանք կրող ու տոկունության մարմնացում եղան հետ.

Համբերությունս...
Ամուլի եզ է,
Քանի դեռ ունի
Ոսկոր ու կաշի,
Նա պիտի քաշի:
Սամին կմաշի,
Լուծն էլ կմաշի,
Հո՛ արա, Միրա՛ն
Քաշի, հա քաշի: -
Քաշի, հա քաշի[3]*:*

Ինչպես տեսնում ենք, առնչությունը ոչ միայն խորքային-իմաստային է, այլև կառուցվածքային ու արտահայտչամիջոցների մակարդակով:

Սահյանական հողի պաշտամունքը բխում է ազգային կենսափիլիսոփայությունից: Նրա առանձին ստեղծագործություններում այն մոտիվային համակարգ է, մի ամբողջ շարք բանաստեղծություններում էլ իմաստային-կառուցվածքային տարր է ու բանաստեղծի հուզաշխարհի կիզակետ: Ըստ բանաստեղծի, հողը մարդու գոյության նախապայմանն է ու վերջին հանգրվանը: «Հողի երգը», «Հողից սովորեմ», «Միլ ենք տալիս հողից» և այլ բանաստեղծություններում Սահյանը տագնապում է մարդու և հողի դարերով սրբագործված կապի խաթարման համար: Հողին կանգնած, հոգոտ ձայնով բանաստեղծն ահազանգում է.

Ով ժամանակ, ասա տեսնեմ,
Դու այդ ի՞նչ ես անում,
Հողածինին հողից կտրել
Այդպես ո՞ւր ես տանում... (II, 260)

Հողն ու այն չենացնող աշխատանքն ամենայն բարիքի, բարության ու մարդկային կատարյալ բարոյականության աղբյուրն ու հիմքն են Սահյանի քնարերգության էջերում: Ավելորդ չենք համարում նշել նույն կենսափիլիսոփայության արտահայտությունը հորովելներում: Բանաստեղծն իր վերաբերմունքը կոչում է «հողոտ խաչիպապության»: Նրա ողջ ստեղծագործությունը համակված է հողոտ, հողահոտ մակդիրներով. նա իրեն անվանում է հողի երգիչ, ե. նրա երգերը, հիրավի, հողաբույր են ու հողածին, նրա երազանքը հողի ու բարձրաթռիչ ներշնչանքի ներդաշնակ միասնություն է.

Բանաստեղծն այո, երկինք է ու հող...
Երկնքում թռչող հողեղեն ոգի
Եվ հողի վրա երկինք է հոսող: (II, 262)

---

[3] *Հ. Սահյան. Բանաստեղծություններ. հ. I. Երևան, 1984, էջ 266–267:*

Սահյանի հայրենասիրական մոտիվները սերտորեն առնչվում են նրա հողասպաշտական մոտիվներին, արտահայտում բանաստեղծի անսահման սերն ու քնքշանքը գեպի հայրենի հողն ու նրա դժվարին ճակատագիրը.

Ախր ուրիշ տեղ
Հողի մեջ այսքան օրհնություն չկա,
Այսքան վաստակած հոգնություն չկա, - (II, 22)

գրում է նա:

Հողի, հորովելի, հողի մշակի սահյանական դեղագիտական ընկալումների շրջանակներում են իմաստավորվում եղ, գութան ե նման այլ առարկայական հասկացությունները:

Դարեր շարունակ հայ ժողովրդի համար եզը եղել է պաշտամունքի առարկա: Մինչե իսկ մեր օրերն են հասել եզան հետ աղերսվող ծիսական արարողությունների վերապրուկներն ու մի շարք սովորություններ, որոնք տարբեր եղանակներով տեղ են գտել նաե Սահյանի բանաստեղծական աշխարհում: Եզը հայ շինականի չարքաշ աշխատանքում եղել է հավատարիմ ընկեր ու օգնական, նրա կենսատու աղբյուրն ու հենարանը.

Եթե բախտը կար, եզը միջուկն էր,
Օջախի ծուխն էր, նախիրի շուքն էր,
Նա շինականի միակ նեցուկն էր,
Նրա բազուկն էր: (II. 7)

Եվ ապա նրա ավանդական պատկերացումների ու հավատալիքների կրողը, որն այնքան հոգեհարազատ է բանաստեղծին՝ իբրե ժողովրդի բարոյական ըմբռնումների արտահայտող.

Եզան վզից ուլունք
Ու զանգ էին կախում,
Պահում էին եզան
Պատիվը թանկ:
Պոչին կանաչ-կարմիր
Թելեր էին կապում,
(Տան ճակատին միշտ կար
Եզան մի գանգ): (II, 161)

Եզան ու դյուղաշխարհի անցյալ կյանքի ազգագրական որոշ իրողությունները Սահյանի բանաստեղծություններում սոսկ անցյալի քաղցր վերհուշներ չեն, այլ հոգեկան տառապանքի վկայություններ, որ ապրում է նա մարդու ե բնության ներդաշնակության խաթարումից, մարդու՝ դեպի հողն ու արդար աշխատանքը ունեցած օտարացումից: Եզ հասկացությունը բանաստեղծի ստեղծագործություններում հարուցում է ոգեղեն, զգացմունքային ելևէջներ.

Եզան կերածը դարման ու սեզ էր.
Ինքը բարության քայլող մի գեզ էր,
Համառ էր, բայց և խոնարհ ու հեզ էր,
Ի՞նչ աներ, եզ էր: (I, 7)

Սահյանի բանաստեղծական աշխարհը շնչում է մաղթանքներով ու օրհնանքներով, այն համակ օրհներգություն է: Բուն ժողովրդական օրհնանքների, մաղթանքների, չգործած երևութական մեղքերի համար ապաշխարելու ցանկության հետ նա ստեղծում է իրենը՝ սահյանականը և գժվար է դրանք զանազանել բուն ժողովրդականից: Նրա խաչի պապն արու զավակի ծնունդն օրհնում է նախնիներից ավանդված բանաձևերով.

Տեր երկնայի՛ն,
Քո փառքը շատ, իմ աչքը լույս,
Տանս մի սյուն,
Մի գերան էլ ավելացավ: (II, 108)

Սահյանը հավատարիմ է նախնյաց ավանդույթին, բայց նրա օրհնանքն ու մաղթանքը կրում են այսօրվա կնիքը՝ բացառիկ ինքնատիպ ու բանաստեղծական: Նրա օրհնանքն ուղղված է եկած ու գալիք ճանապարհին, հողին ու լեռներին, սերմնացանին ու հունձքին, հույսին ու լույսին, մարդուն ու դարին: Նյութեղեն հասկացությունները նրա ներշնչանքից, ոգեշնչումից դառնում են հուզական՝ տոգորվում մարդկային բարձր գաղափարներով.

Ուրեմն դարձյալ հույսին աղոթեմ,
Մեր չարչարանքին, հոգսին աղոթեմ,
Ամեն օր բացվող լույսին աղոթեմ
Ու լույսի հոտին: (II, 337)

Սահյանը մի շարք բանաստեղծություններ է դրել ժողովրդական ողորմիսներին բնորոշ կայուն արտահայտչական միջոցների օգտագործմամբ. «Դառնամ ասեմ», «Ողորմի տամ» բանաձևերի միջոցով բանաստեղծն արժեքավորում է մարդու կատարած բարի ու օգտակար գործը: Նա ևս իր թաքուն երազանքն ունի՝ արժանանալ «ողորմի» մաղթանքի.

Ստվերս քաշեք ձեզ վրա,
Նստեցեք, հով անեմ շոգին,
Մրդերս քաղեցեք մեկ-մեկ,
Տնկողիս ողորմի տվեք: (II, 145)

Հայ ժողովրդական բանահյուսությունը, մասնավորապես երդարվեստը ստեղծել է իր ազգային հոգեկան կերտվածքին, հոգեբանությանը, բանաստեղծական ըմբռնումներին համահունչ խորհրդանիշներ ու հասկացություններ: Սահյան բանաստեղծը լիաբուռն օգտվել է ժողովրդի ստեղծածից:

Նրա բանաստեղծական աշխարհում որոշակի հաճախականությամբ հանդես են դալիս բարդին, չինարին, մասրենին, փշատենին, ապա՝ արադիլը, կռունկը, ծիծեռնակը, արծիվը, լորն ու արտույտը: Այս շարքում հատկապես ուշադրավ են արտույտին առնչվող բանաստեղծությունները: Հայրենի հանդերում բուն հյուսած այդ խոնարհ, քնքուշ ու համեստ թռչունը դառնում է բանաստեղծի խոսափողը՝ արտահայտելու համար նրա սիրն ու կարոտը հարազատ լեռնաշխարհի, տան ու օջախի, մարդու ու մարդկայինի նկատմամբ.

Էլ երկնքում կատարներիդ
Ցորեն ցանող չկա,
Ասող-խոսող արտույտներիդ
Ականջ անող չկա, - (II, 259)

ցավով նշում է բանաստեղծը:

Սահյանը կարծես չի կարողանում թոթափել արտույտների կախարդանքը. նրանք մշտապես ներկա են նրա քնարերգության մեջ: Տակավին 1953 թ. «Արտույտներ» բանաստեղծության մեջ նա գրում է.

Բայց տեսել ենք, որ չունեմ ես ոչ մի երդ առանց ձեզ,
Իմ ամեն մի տողի տակ թռվռում եք դուք անտես: (I, 24)

Արծվի հզոր թևերի շառաչյունը չի դերում բանաստեղծին, նրա երազանքը մնում է ավանդական կլթիկ-կլթիկ տվող արտույտը.

Արծիվը արծիվ թող մնա,
Արտույտի երգին եմ կարոտ... (II, 398)

Ժողովրդական առած-ասացվածքները, դարձվածքները, ոճերը, բառակապակցությունները, որոնք բնորոշ են առավելապես ժողովրդական լեզվամտածողությանը, անաղարտ, անփոփոխ, երբեմն բանաստեղծորեն վերաիմաստավորված ու ձևափոխված հանդես են դալիս Սահյանի քնարերգության մեջ՝ նպատակասլաց, պարզ ու վճիտ բնույթ պարգևում տվյալ ստեղծագործությանը.

Այս աշխարհում ես ապրեցի,
Ավաղ, քարին քացի տալով: (II, 243)

Աչքի փուշը լինել կամ աչքի լույսը, սրտից արյուն է կաթում, աղը լաց է լինում, շրթունքը ճաքել (կարոտից), ահից լեզուն կուլ տալ, ափի մեջ ձվածեղ անել, ու այսպես կարելի է շարունակել, ամփոփենք իր իսկ բանաստեղծի խոսքով.

Քանի շնչում եմ մի քիչ
Եվ մնում եմ դեռ մի քիչ.

Իմ երեսի ջրով ես,
Ինձ բաց թողեք, ես գնամ: (II, 371)

Հետաքրքիր են այն բառակապակցությունները, մակդիրներն ու բառերը, որ բանաստեղծը ներառել է իր բառապաշարում հույժ գրականի հետ. բաց ճակատ, արգար հաց, մի պուտ հավատ, բարակ առու, խալխ ու խիդան, շարմաղ, խանում-խաթուն, ծուփ-ծուփ, ծերատ-պռատ, պահած-պաշտած, շենք ու շնորհք, խտիտ, թխլիկ, շեկլիկ, շվաք ու շուք և այլն: Զուգահեռաբար կիրառվող ներքոհիշյալ նմուշները վկայում են բանաստեղծի գրական հայերենին տիրապետելու կարողության ու օգտագործման հմտության մասին. հոգնաշավիղ աշխարհ, շարականաշուք շշուկներ, աստվածավայել մորուքը ծերերի, հոգնաշնորհ ու հոգնաշահ, հայրենահամ պտուղ, ընարաբանել խորհուրդը հասկի և այլն:

Բանաստեղծի կողմից ժողովրդական լեզվամտածողությանը յուրահատուկ արդար, խոնարհ, կանաչ, կարմիր, կանաչ-կարմիր մակդիրների կիրառությունը հավասարարժեք է բանարվեստի ու կենդանի խոսքի դրանց կիրառության մեջ: Սահյանն ինքն իրեն բնորոշում է իբրև «խոնարհ ջրկիր», խոնարհ են նրա երգն ու սիրտը, խոսքն ու երազը, լուսինն ու սարերը, երգիկն ու քարերը: Գույների մեջ գերապատվությունը տրվում է կանաչ, կարմիր, կանաչ-կարմիր գույներին, որոնց կիրառության ժամանակ պահպանվում ու ավելի շեշտվում է դրանց ժողովրդական իմաստն ու նշանակությունը: Իսկ ժողովուրդն այդ գույների միջոցով բնորոշել է այն բոլոր իրողությունները, որոնք օժտված են ներքին կենսական ուժով, ապրելու, ծաղկելու ու զարգանալու ունակությամբ: Փեսացուի հանդերձին կանաչ-կարմիր են կապել, օրհնել են կանաչ-կարմիրդ կապես, որդուդ կանաչ-կարմիրը կապես, բանաձևերով, եզան պոզերից կանաչ-կարմիր թելեր են կախել և այլն: Բանաստեղծը կանաչ-կարմիրով է որակում դարերը, տարիները, ժամանակն ընդհանրապես, ապա արևը, մայրամուտները, հավատը, հավիտենությունը, հրաշքը, հովերը, ծիածանը, այն ամենը, ինչը պիտի նպաստի մարդու մարդ մնալուն, նպաստի նրա առաջընթացին, ծառայի նրան: Բանաստեղծը կանաչն ու կարմիրը երբեմն օգտագործում է դրանց ֆիզիկական գունային նշանակությամբ ու առումով, բայց համադրում առարկայականն ու հուզականը, այդ կերպ ընդգծելով, իմաստավորում ու խորհրդանշում է դեռահաս, մատաղ կյանքը, ջահելությունը: «Նաիրյան դալար բարդին» բացառիկ օրինակ է վերոհիշյալ կիրառման, կանաչաբույր, կանաչաշունչ, անանց հմայքով ու քնքշությամբ օժտված նկարեղեն այդ բանաստեղծությունը:

Սահյանն ապրեց հաշտ ու խաղաղ իր խղճի և իր ժողովրդի հետ, ապրեց տոհմիկ հայ մարդուն ու հայ բանաստեղծին վայել արժանապատվությամբ, ապրեց, իր իսկ խոսքով, «իր երեսի ջրով» և հազար անդամ իրավացի է իր կատարած գործի գնահատանքի հարցում և որը նույնպես ժողովրդական ակունքներից է բխում.

Իմ առնելիքը առա
Եվ իմ տալիքը տվի...

Եվ բախտից գոհ եմ այնպես,
Ինձ բաց թողեք, ես գնամ: (II, 371)

Վերջին տարիներին լույս տեսած «Քարե պատարագ» (1999 թ.), և «Ինձ բացակա չդնեք» (2004 թ.) ժողովածուներում տեղ գտած ստեղծագործությունները հաստատում են, որ Բանաստեղծն ամենևին չի հեռացել իր «ամենաջինջ աղբյուրների ակունքներից»: Նրա երգերում իր «կաղկղան» է շարունակում կաքավը, բայց վիրավոր ու արյունոտ, արագիլը՝ բայց վշտահար ու այրի, լորիկն ու ծիծեռնակը, իսկ կանաչ, կարմիր գույները զիջել են սևին:

Սահյանը մնում է Սյունյաց բարձրիկ կատարների նույն «խոնարհ երգիչը», նույն հողապաշտն ու հողեղենը, ունկնդիր «սեահողի շնչառությանը», պատրաստ «ոտքի տակի հող» լինել, «մատաղի գառ» դառնալ իր «Հատընտիր Հայաստանի» համար: Նա մնում է նույն երգապաշտն ու հայրենապաշտը, տաղի «հոգնած ջրկիրը», նորից ու նորից գիմում ժողովրդական երգի անբավ դոհարներին: Դրա մի բացառիկ նմուշ է «Ետ պտտվիր» բանաստեղծությունը.

Մի աշխարհ կա ամեն երդում,
Շեն շնչավոր շողակաթիկ...
Մեկը «Սոնա յար» է երգում
Եվ «Ջաղացս պատիկ-պատիկ»[4]*:*

Սահյանը երազում է իր «անվարտիք» բախտի վերադարձ ու այն ժամանակ.

Թող ջրատվեր
Իմ ջաղացը պատիկ-պատիկ: (205)

Փոխվել է աշխարհը, փոխվել են Սահյանի երգերի մոտիվները: Յոթանասուն տարվա փորձառությամբ ու նահապետական հայ մարդու իմաստությամբ զինված՝ նա չի կարողանում տարբերել «օրհնանքը անեծքից», «սրբին լրբից», «վանդակը՝ վանքից, գղյակը՝ բանտից»: Ալեկոծված, զգայուն հոգուց տվայտանքներն ու գառը խոհերը ելք են փնտրում ու չեն կարողանում գտնել.

Ուզում եմ կորչել, չքվել հավիտյան
Այս շրջապատի անտարբերության
Սառուցյալ դաշտից,
Այս համատարած մտքի երաշտից... (174)

---

[4] *Հ. Սահյան. Ինձ բացակա չդնեք. Երևան, 2004, էջ 205 (ժողովածուից բերվող մեջբերումների էջերը կնշվեն դրանց կից):*

Սոցիալական անարդարությունից, հոգևոր ու բարոյական չափանիշների խաթարումից դժգոհ Սահյանը տագնապում ու տառապում է բռնության, չարիքի դեմ «ծառս եղած» իր ժողովրդի, Արցախի համար: Այս շրջանի նրա երգերում խիզախում են նոր ծուռ Դավիթներ, որոնք, Քեռու կանչին ականջալուր, կենաց ու մահու կռիվ են մղում ոսոխի դեմ ու նրանց գովքն է անում բանաստեղծը.

Տղերք կան պինդ, սլնդակուռ,
Ում տեսնես՝ մի Սասնա ծուռ...
Ծռեր կան, Սասուն չունենք: (141)

Սահյանը հավատարիմ է մնում իր հայրենի երկրի հավերժական երթին.

Եվ մեր երթի դեմ կչքվի ինքը՝
Այս ցրտի, սովի, թուրքի դաշինքը: (215)

Իսկ եթե վախճանն անխուսափելի է, ապա՝

Թե մեռնել կա, հայերեն ենք մեռնելու,
Ինչպես մաքուր ցորենի հունդը հողում: (7)

Այսպիսով, Հ. Սահյանը իր ստեղծագործություններում, դիմելով հայ ժողովրդական բանահյուսությանը, մեծ վարպետությամբ ու նուրբ ճաշակով միահյուսել, միաձուլել է իր՝ բանաստեղծի տաղանդի ու ժողովրդականի ընձեռած լայն հնարավորությունները, ստեղծել անկրկնելի հմայքով, հայեցի ու հայկականությամբ տոգորված քնարերգություն:

НАРОДНЫЕ ИСТОКИ ЛИРИКИ АМО САГИЯНА

АЛВАРД ГАЗИЯН

Резюме

Армянское народное творчество веками являлось благодатным источником для плеяды мастеров пера от Г. Нарекаци и Ов. Туманяна до поэтов наших дней. В этом контексте поэзия Амо Сагияна - интересный, своеобразный пример. А. Сагиян в своем творчестве с большим мастерством и вкусом использовал многожанровый, богатый фольклорный материал - эпос, песни, молитвы, благословения, пословицы, поговорки, эпитеты, символы и т.д. и особенности стихосложения, сплел с возмостьями своего поэтического таланта, создав стихи, необыкновенно красивые, овеянные подлинно национальным армянским духом, проникнутые глубоким гуманизмом и народным миропониманием.